քաղաքացիական գործ թիվ ԵԴ/30672/02/22

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.06.2022թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ դատավոր Ա.Սուքոյանի, ծանոթանալով <<Մեգիէլ >> ՍՊԸ-ի ընդդեմ <<Նորք-Մարաշ բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ-ին ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/54 ընթացակարգի հրավերը օրենքների և իրավական ակտերի պահանջներին և ՀՀ ֆինանսների նախարարի 31.05.2022 թվականի թիվ 235 Ա հրամանով հաստատված օրինակելի ձևի կանոններին համապատասխան ներկայացնելուն պարտավորեցնելու, 1-ին և 2-րդ չափաբաժինների համար մատակարարման 120-օրյա ժամկետ սահմանելուն պարտավորեցնելու և պայմանագրի 8.13 կետով որպես անբաժանելի մաս սահմանված Հավելված 1-ը հրավերով ներկայացնելուն, իսկ Հավելված 2-ը նորմերի և օրինակելի ձևով սահմանված ձևաչափով ներկայացնելուն պարավորեցնելու պահանջների մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց

<<Մեգիէլ >> ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ընդդեմ <<Նորք-Մարաշ բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ-ին ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/54 ընթացակարգի հրավերը օրենքների և իրավական ակտերի պահանջներին և ՀՀ ֆինանսների նախարարի 31.05.2022 թվականի թիվ 235 Ա հրամանով հաստատված օրինակելի ձևի կանոններին համապատասխան ներկայացնելուն պարտավորեցնելու, 1-ին և 2-րդ չափաբաժինների համար մատակարարման 120-օրյա ժամկետ սահմանելուն պարտավորեցնելու և պայմանագրի 8.13 կետով որպես անբաժանելի մաս սահմանված Հավելված 1-ը հրավերով ներկայացնելուն, իսկ Հավելված 2-ը նորմերի և օրինակելի ձևով սահմանված ձևաչափով ներկայացնելուն պարավորեցնելու պահանջների մասին:

Հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձվել 14.06.2022թ.:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 121-րդ և 122-րդ և 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ 234.6-րդ հոդվածներով <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

<<Մեգիէլ >> ՍՊԸ-ի ընդդեմ <<Նորք-Մարաշ բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ-ին ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/54 ընթացակարգի հրավերը օրենքների և իրավական ակտերի պահանջներին և ՀՀ ֆինանսների նախարարի 31.05.2022 թվականի թիվ 235 Ա հրամանով հաստատված օրինակելի ձևի կանոններին համապատասխան ներկայացնելուն պարտավորեցնելու, 1-ին և 2-րդ չափաբաժինների համար մատակարարման 120-օրյա ժամկետ սահմանելուն պարտավորեցնելու և պայմանագրի 8.13 կետով որպես անբաժանելի մաս սահմանված Հավելված 1-ը հրավերով ներկայացնելուն, իսկ Հավելված 2-ը նորմերի և օրինակելի ձևով սահմանված ձևաչափով ներկայացնելուն պարավորեցնելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել դատարանի վարույթ:

Դատական նիստը նշանակել 29.06.2022 թվականին ժամը 14:30-ին:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՍՈՒՔՈՅԱՆ